ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

04. 12. 2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (գնահատող աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ))՝

-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,

գնահատողներ՝

- ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պետ, գնդապետ Կ. Մխիթարյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պահեստների, խողովակաշարերի և տեխնիկական միջոցների բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Հ. Քևնակսզյան

բացակայում են՝

- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Է. Համբարձումյան,
- ՀՀ ԶՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության ավագ սպա, կապիտան Ա. Գևորգյան:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Ա. Հովհաննիսյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

1. Մասնակիցների՝ **գնանշման հարցման** ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/7» ծածկագրով **գնանշման հարցման** ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին մասնակիցների համապատասխանությունը հավաստող փաստաթղթերն առկա են և համապատասխանում են հրավերի պայմաններին, բացառությամբ՝

- ԷԼԿՈՄՊ ՍՊԸ-ի, մասնավորապես՝

1) մասնակցի ուղարկած **3-րդ և 3.1** հավելվածներում թերի է նշված ընթացակարգի ծածկագիրը, այնինչ պետք էր ուղորդվել վերոնշյալ ծածկագրով հրապարակված հրավերի հստակ ձևակերպումներով:

2) մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստին պետք է ուղարկեր նաև հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում **պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրի** (պայմանագրերի, համաձայնագրերի) պատճենը, ինչպես նաև այդ այդ պայմանագրի (պայմանագրերի, համաձայնագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (**հանձման-ընդունման արձանագրություն** և այլն) **պատճենները կամ** տվյալ պայմանագրի կատարումն **ընդունած կողմի գրավոր հավաստման** բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը. այնինչ մասնակիցը չի ապահովել հայտով ստանձնած վերոնշյալ պահանջը:

- Երվադա ՍՊԸ-ի, մասնավորապես՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 28.11.2019թ.-ին տրամադրված եզրակացության /տեղեկատվության/ համաձայն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/7» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «Երվադա» ՍՊԸ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 06.11.2019թ.-ին, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է 401,081 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություններ, ինչը գերազանցում է տվյալ մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը, ինչպես նաև հիսուն հազար ՀՀ դրամը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 04.12.2019թ. ծանուցել մասնակիցներին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ:

Սահմանված ժամկետում մասնակիցները շտկեն են անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է:

Քանի որ 28.11.2019թ. ստացվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը, և սահմանված ժամկետում մասնակցի կողմից ստացվել է տեղեկանք՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունենալու վերաբերյալ, հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող:

1.2. Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց 11.12.2019թ. Երվադա և Էլկոմպ ՍՊԸ-ների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/7» ծածկագրով **գնանշման հարցման** ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Հովհաննիսյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/7» ծածկագրով **գնանշման հարցման** ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող տրանսցուցային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)		Հ. Մելիքյան
Գնահատող		Կ. Մխիթարյան
Գնահատող		Գ. Ուստյան
Գնահատող		Հ. Քևնակսզյան
Գնումները համակարգող՝		Ա. Հովհաննիսյան